ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
4	կիսավերարկու	Ծանոթություն-տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի	Ծանոթություն-տվյալ ապրանքը մակնիշ չունի	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Մուգ կապույտ գույնի երկշերտ անջրանցիկ 100% նեյլոն կամ նույնատիպ, տեսակարար կշիռը՝ 130 գ/մ2, կտորի ներսի կողմից մեմբրանե ծածկույթով, օձիքը կանգուն, հանովի ներդիրով: Օձիքը երկակի է, ներսում շղթայի տակ նախատեսված է գլխարկ: Գլխարկը ունի կարգավորիչ, կպչուն ժապավեն: Օձիքի մեջտեղում ներկարված է կախիչ: Թիկունքը բաղկացած է 3 մասից, վերևի մասում հորիզոնական՝ շղթայով փակվող ներկարված գրպան: Առաջամասը բաղկացած է 4 մասից,

					2-րդ մասի ձախ կողմում կարվում է 3 մմ երկարությամբ օղակ՝ տեսախցիկի համար, իսկ աջ կողմի 2-րդ մասում կարվում է տարբերանշան և 35մմ երկարությամբ օղակ՝ ռադիոկայանի խոսափողի համար: 3-րդ մասի աջ և ձախ կողմերում հորիզոնական գրպաններ՝ ներկարված ամբողջական լուսանդրադարձնող կափույրով և շղթայով փակվող, 4-րդ մասի աջ և ձախ կողմերում թեք գրպաններ՝ ներկարված ամբողջական կափույրով և շղթայով փակվող: Դիմացից ամբողջական կափույրով ներկարված պլաստմասե շղթայով և կոճգամներով: Կողային և կրծքային գրպանները՝ կայծակաճարմանդով: Կիսավերարկուն կողքերից ներքևի մասում անջատվում է շղթայով, որի վրա կան կարգավորիչներ: Թևքերի ծայրերին ներկարված են էլաստիկ ժապավեններ՝ կարգավորող կպչունակով: Թևքերի վրա 2 շերտով 20 մմ լայնությամբ կարվում է լուսանդրադարձնող ժապավեն: Գոտին կարված կիսավերարկուին, որի մեջ մշակված է էլաստիկ

					ժապավեն: Կիսավերարկուն ներսից՝ ներդիրի ձախ կրծքամասի հատվածում ունի ուղղահայաց գրպան: Ընդարձակ կտրվածք՝ շարժունակությունն ապահովելու համար: Ներդիրը բայկայի կտորից, ամբողջությամբ առանձնանում է շղթայով, որի վրա կարված է աստառ: Ներդիրի թևքերը ներսից նույնպես առանձնանում են պլաստմասե շղթայով: Թիկունքի մասում լուսանդրադարձնող POLICE, իսկ աջ կրծքամասում ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ բառերը: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան, աջ թևքի ուսամասից 60 մմ ներքև Պարեկային ծառայություն թևքանշան: Ուսադիրները՝ հանվող: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ մեծ պարկով, որի մեջ տեսականին 5 հատ՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Պարկերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող

					կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով տրամադրվում է լաբորատոր ստուգման եզրակացությունը: Նմուշը և չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
4					